

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**ՈՐՈՇՈՒՄ**

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՕՐԵՆՍԴԻՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ**  
**ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ» ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո զ ու մ է.**

Հավանություն տալ՝

1) Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգին՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին՝ համաձայն N 2 հավելվածի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՎԱՐՉԱՊԵՏ**

**ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

**Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ**  
**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ և ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ**

**I. Ներածություն**

1. Քաղաքացիական հասարակությունը առանցքային դեր է կատարում մասնակցային ժողովրդավարության, իրավունքի գերակայության ապահովման, որոշումների կայացման մակարդակում հասարակական տարբեր շերտերի շահերի ներկայացման գործընթացներում, որոնք կարևորագույն նախապայմաններ են հասարակության կայուն զարգացման համար: Հանրային կառավարման, դրա թափանցիկության ապահովման և զարգացման ասպարեզում քաղաքացիական հասարակության դերի կարևորությունն աճում է ամբողջ աշխարհում: Հայաստանի Հանրապետությունում անկախության տարիների ընթացքում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (այսուհետ՝ **ՔՀԿ**) ձևավորման առումով լուրջ քայլեր են իրականացվել, կան որոշակի ձեռքբերումներ:

2. 2009 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ Կառավարությունը հաստատեց «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, որը, մասնավորապես, նախատեսում էր նաև ՔՀԿ-ների նկատմամբ մի շարք վերահսկողական գործիքներ: Առաջարկվող լուծումները մտահոգեցին ՔՀԿ-ների ներկայացուցիչներին: Ծագած հարցերը, ինչպես նաև նախագծում չներառված, սակայն լուծում պահանջող խնդիրները քննարկելու նպատակով ստեղծվեց ՔՀԿ-ի նախաձեռնող խումբ: Համախմբված ավելի քան 300 հասարակական կազմակերպությունների նպատակն էր մասնակցել դաշտը կարգավորող օրենսդրության մշակման աշխատանքներին և ներկայացնել առաջարկություններ:

3. Նշված օրենքի նախագծի մշակումից հետո տարբեր կառույցներ անցկացրեցին քննարկումներ, որոնց նպատակն էր նախ բարձրաձայնել ոլորտում առկա խնդիրները, ապա առաջարկել առավել համապարփակ և ընդունելի լուծումներ: Տարբեր ՔՀԿ-ներ և կազմակերպությունների ցանցեր ամփոփեցին հանրային քննարկումների ընթացքում հնչած կարծիքները ամփոփվեցին և հիմք հանդիսացան սույն հայեցակարգի համար:

4. Իրականացվեցին մի շարք մասնագիտական հետազոտություններ Քաղաքացիական հասարակության ցանցի, Հանրային խորհրդի, «Գործընկերություն

հանուն բաց հասարակության», «Շահույթ չհետապնդող իրավունքի բուլղարական կենտրոնի» (BCNL/ՇՀԻԲԿ), ԵՄ Խորհրդատվական Խմբի և այլ կառույցների կողմից:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությունը, կարևորելով քաղաքացիական հասարակության դերը ժողովրդավարության զարգացման գործում, հաշվի առնելով հանրային քննարկումների, ինչպես նաև մասնագիտական հետազոտությունների ընթացքում ներկայացված առաջարկություններն ու տեսակետները, առաջարկում է սույն հայեցակարգը որպես *քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների ծրագիր*:

6. ՔՀԿ-ների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների սույն հայեցակարգի (այսուհետ՝ **Հայեցակարգ**) գլխավոր նպատակն է ապահովել ՔՀԿ-ների բնականոն գործունեությունը և կայուն զարգացումը:

## II. Առկա խնդիրները և առաջարկվող լուծումները

7. Ուսումնասիրությունները և հանրային քննարկումները բարձրացրել են ՔՀԿ-ների բնականոն գործունեությանը և կայուն զարգացմանը խոչընդոտող մի շարք խնդիրներ: Ստորև ներկայացնում ենք նշված խնդիրները, ինչպես նաև դրանց լուծման ճանապարհները:

**8. Քաղաքացիական հասարակության (ոչ առևտրային) կազմակերպությունների օրենսդրական դասակարգման (տեսակների) հիմնախնդիր:**

8.1. ՔՀԿ-ների առկա օրենսդրական դասակարգումը և դրա արդյունքում կիրառվող սահմանափակումները ստեղծում են մի շարք խնդիրներ: Մասնավորապես՝ գործող օրենսդրության շրջանակներում անհնար է որոշ չափանիշներով ՔՀԿ-ների հիմնադրումը: Օրինակ, օրենսդրությունը չի նախատեսում սահմանափակ մասնակցությամբ ոչ առևտրային կազմակերպության ստեղծման հնարավորություն, իսկ դա գիտահետազոտական կենտրոնների (tink tank) գործունեության համար ամենահարմար կազմակերպչական-իրավական ձևն են:

8.2. Առկա իրավական կարգավորումներում գերակշռում են իմպերատիվ նորմերը, ինչը հնարավորություն չի տալիս մշակել առավել ճկուն լուծումներ և նվազեցնում է կանոնադրության դերը: Ավելին, ոչ առևտրային կազմակերպությունների առկա դասակարգման մեջ բացակայում են այնպիսի կազմակերպական իրավական ձևեր, որոնցում միաժամանակ հնարավոր կլինի միավորվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Այդպիսի խնդիր առաջանում է, օրինակ, սպորտային ֆեդերացիաներում, երբ կարիք է առաջանում միավորել ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային կազմակերպություններ (սպորտային թիմերը և ակումբները կարող են ստեղծվել ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային կազմակերպությունների ձևով):

**8.3.** ՔՀԿ-ների գործունեության ժամանակ, առկա խնդիրներով պայմանավորված և միջազգային փորձի ուսումնասիրման արդյունքում ներկայացվող բարեփոխումների շրջանակներում, առաջարկվում է ՀՀ գործող օրենսդրության վերանայում, ինչի արդյունքում օրենսդրությունը կհամապատասխանեցվի քաղաքացիական հասարակության ներկա պահանջներին և կխթանի քաղաքացիական հասարակության հետագա զարգացմանը: Մասնավորապես, առաջարկվում է փոփոխություն կատարել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 5-րդ գլխում (Իրավաբանական անձինք)<sup>2</sup> վերանայելով ոչ առևտրային կազմակերպությունների տեսակները, ինչպես նաև ընդունել համապատասխան հատուկ օրենսդրություն՝ առանձին կազմակերպական-իրավական տեսակների մասով: Փոփոխությունների արդյունքում օրենսդրությունը կնախատեսի ՔՀԿ-ների երկու հիմնական տեսակ՝ միավորում և հիմնադրամ:

**8.4. Միավորումը՝** շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություն է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջները բավարարելու, իրենց և այլոց իրավունքները և շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրագուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով օրենքով սահմանված կարգով, միավորվում են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք և իրավաբանական անձինք<sup>2</sup>:

**8.5. Հիմնադրամը՝** քաղաքացիների և/կամ իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական կամ այլ հանրագուտ նպատակներ:

**8.6. ՔՀԿ-ների նման դասակարգման շնորհիվ կլուծվեն առկա մի շարք խնդիրներ, որոնք պայմանավորված են հասարակական կազմակերպությունների կառավարման, ինչպես նաև սպորտային ֆեդերացիաների, կրթական հաստատությունների և ստեղծագործական միությունների գործունեության առանձնահատկություններով:**

## **9. Կազմակերպությունների անվանումը և գրանցումը.**

**9.1.** Չնայած վերջին մի քանի տարիների ընթացքում առկա է զգալի առաջընթաց առևտրային կազմակերպությունների գրանցման հարցում,

---

<sup>2</sup> Շահույթ չհետապնդող կազմակերպության ներքո ֆիզիկական և իրավաբանական անձանց միավորման իրավական կարգավորումներ են գործում եվրոպական մի շարք երկրներում, օրինակ, Լիտվայում (Law on associations, Law on Public Institutions), Լատվիայում (Associations and Foundations Law, Law on non-profit organizations), Բուլղարիայում (Bulgarian Non-Profit Legal Entities Act), Չեխիայի Հանրապետությունում (Act on Public Benefit Corporations), Էստոնիայում (Non-profit Associations Act):

մասնավորապես, որ գրանցումը կատարվում է մեկ պատուհանի սկզբունքով, որ գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի տիպային փաթեթը պատրաստվում է իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի գործակալության ցանկացած գրասենյակում, որ վերացել է տարածքային տարանջատումը, այդուհանդերձ ոչ առևտրային կազմակերպությունների զգալի մասը կարող է գրանցվել միայն իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի գործակալության կենտրոնական ստորաբաժանումներում՝ Երևան քաղաքում: Նշված հանգամանքը խոչընդոտում է մարզերի քաղաքացիական հասարակության կայուն զարգացմանը: Ավելին, ՔՀԿ-ներ գրանցելու համար հասանելի չի առցանց գրանցման համակարգը:

**9.2.** Անհրաժեշտ է ոչ առևտրային կազմակերպությունների համար <https://www.e-register.am/> համակարգի միջոցով ստեղծել առցանց գրանցման հնարավորություն, իսկ ՀՀ իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի գործակալության սպասարկման բաժնի բոլոր գրասենյակներում՝ փաստաթղթերի ընդունման հնարավորություն:

**9.3.** Նախատեսվում է սահմանել ՔՀԿ-ների անվանումները պաշտպանող օրենսդրական լուծումներ: Մասնավորապես, կազմակերպությունները չեն կարող ունենալ այնպիսի անվանում, որը շփոթության աստիճանի մոտ կլինի մեկ այլ կազմակերպության անվանմանը: Միևնույն ժամանակ, նշված նմանությունը հիմք չի լինի գրանցման մերժման համար, սակայն հիմք կարող է դառնալ այլ կազմակերպության կողմից անվան փոփոխության պահանջ ներկայացնելու համար: Կազմակերպության գրանցումը կարող է մերժվել, եթե վերջինի հիմնադիրները չեն պահպանել կազմակերպության անվանման անհատականացման օրենսդրական պահանջները:

**9.4. Այսպիսով, պարզեցվում և հստակեցվում է ոչ առևտրային կազմակերպությունների պետական գրանցման վարչարարությունը՝ գրանցվող կազմակերպություններին ազատելով ավելորդ գործընթացներից և հնարավոր դարձնելով առցանց գրանցումը: Ապահովվում է կազմակերպությունների անվանումների անհատականացումը և պաշտպանությունը:**

## **10. Իրավական կարգավորումների ազատականացում.**

**10.1.** Գործող օրենսդրությունը ՔՀԿ-ների կառավարման հարցում բավականին ազատական մոտեցում է դրսևորել՝ կազմակերպության կառուցվածքի ձևավորումը թողնելով կազմակերպության կանոնադրությանը: Նման մոտեցումը արդարացված է՝ հաշվի առնելով, որ այն թույլ է տալիս կազմակերպություններին իրենց կանոնադրության միջոցով սահմանել գործունեության առանձնահատկություններին և պահանջներին առավել համապատասխանող կառուցվածք:

**10.2.** Սույն Հայեցակարգով առաջարկվում է վերոհիշյալ մոտեցումն ընդլայնել և ազատականացնել օրենսդրական այլ կարգավորումները: Մասնավորապես, առաջարկվում է որոշումների ընդունման կարգի, ժողովներ հրավիրելու պարբերականության հետ կապված հարցերով նախատեսել առավել ճկուն կանոնակարգում:

**10.3. Իրավական կարգավորման ազատականացման և դիսպոզիտիվ նորմերի մասնաբաժնի ավելացման արդյունքում կբարձրանա կանոնադրության դերը որպես հիմնադիր իրավական փաստաթղթի, ինչը խթան կհանդիսանա ՔՀԿ-ների ինստիտուցիոնալ զարգացման համար:**

**11. Հասարակական կազմակերպությունների ֆինանսական կայունության ապահովում.**

**11.1.** ՔՀԿ-ների գործունեության արդյունավետության առավել կարևոր նախապայմաններից է դրանց ֆինանսական կայունության ապահովումը: Երկարաժամկետ ֆինանսական մուտքերի ակնկալիքի պայմաններում ՔՀԿ-ները հնարավորություն կունենան կախված չլինել առանձին դոնորներից, պլանավորել և կյանքի կոչել երկարաժամկետ ծրագրեր, ինչը կհանգեցնի իրենց գործունեության որակական փոփոխության: Նշված խնդրի լուծման համար նախատեսվում են ստորև նշված գործիքները:

**11.2. Սեփական անունից առևտրային (ձեռնարկատիրական) գործունեության իրականացման հնարավորություն.** Անմիջականորեն ձեռնարկատիրությամբ զբաղվելու իրավունքը ունի մեծ նշանակություն ՔՀԿ-ների ֆինանսական կայունության, ինչպես նաև դրանց բնականոն գործունեությունն ապահովելու համար: Անհրաժեշտ է վերանայել ՀԿ-ների կողմից անձամբ ձեռնարկատիրությամբ զբաղվելու իրավունքի սահմանափակումը: Ուղղակիորեն առևտրային կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը կարող է սահմանափակվել առաձնին տեսակների գործունեությունը կարգավորող իրավական ակտերով կամ կազմակերպության կանոնադրությամբ:

**11.3.** Ուղղակիորեն առևտրային գործունեությամբ զբաղվելու իրավունքի սահմանափակման վերացումը կնպաստի, որպեսզի Հայաստանի օրենսդրությունը համապատասխանի միջազգային լավագույն փորձին: ԵՄ անդամ երկրները՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության, նախատեսում են ՔՀԿ-ների առևտրային (ձեռնարկատիրական) գործունեությամբ զբաղվելու իրավունքը: Նման կարգավորումն առկա է նաև ԱՄՆ-ի և մի շարք այլ զարգացած երկրների օրենքներում: Միևնույն ժամանակ հիմք ընդունելով լավագույն միջազգային փորձը պետք է նախատեսվի, որ ՔՀԿ-ները պետք է իրավունք ունենան զբաղվել այնպիսի առևտրային գործունեությամբ, ինչը բխում է իր նպատակներից և որոնք ամրագրված են կազմակերպության կանոնադրությամբ:

**11.4. Քաղաքացիական հասարակության կառույցների պետական ֆինանսավորման և դրամաշնորհների տրամադրման գործընթացների բարելավում.** Հասարակական հատվածի զարգացման նպատակով ՀՀ կառավարությունն ամեն տարի ֆինանսական աջակցություն է տրամադրում հասարակական կազմակերպություններին: 2010թ. պետական բյուջեով «ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին նվիրատվության նպատակով» հատկացվել է 1.909.541.900 դրամ, 2011թ.՝ 1.986.069.900 դրամ, իսկ 2012թ. բյուջեով՝ 2.063.965.600 դրամ:

**11.5.** Սակայն, ինչպես վկայում են տեղական և միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությունները, կառավարությունը չունի հասարակական սեկտորին ֆինանսական աջակցության տրամադրման համար հետևողական քաղաքականություն, հստակ և թափանցիկ ընթացակարգ, որով կորոշվի, թե ինչպիսի ծրագրեր են ֆինանսավորվելու, ինչ մեխանիզմով և ինչքան գումար է հատկացվելու ՔՀԿ-ներին: Բացի այդ, կատարվող գործընթացների իրականացման մասին տեղեկատվությունը հասանելի չէ հանրությանը, ինչը հնարավորություն չի տալիս եզրակացություններ անել դրամաշնորհների տրամադրման արդյունավետության վերաբերյալ՝ տեղ թողնելով կոռուպցիոն ռիսկերի և չարաշահումների համար<sup>3</sup>:

**11.6.** Պետական բյուջեից ՔՀԿ-ներին ֆինանսական հատկացումներ տրամադրելու գործընթացը չի կարգավորվում առանձին օրենքով: Այդ գործընթացը կարգավորող իրավական ակտերն էլ («Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «ՀՀ Պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգ» (ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24 N 1937-Ն որոշում), «ՀՀ պետական բյուջեից ՀՀ Նախագահի աշխատակազմին հատկացված միջոցները հասարակական կազմակերպություններին որպես դրամաշնորհներ հատկացնելու կարգ» (ՆՀ-118-Ն, 19-ը մայիսի, 2008թ.) տարբերություններ չեն սահմանում առևտրային, շահույթ հետապնդող և այդպիսի նպատակներ չունեցող ՔՀԿ-ների միջև, ինչը խիստ դժվարացնում է վերջիններիս մասնակցությունը հետազոտական, սոցիալական, կրթական, մշտադիտարկման, խորհրդատվական և նմանատպ ծրագրերին: Պատկերը նույնն է նաև միջազգային կազմակերպությունների կողմից պետական կառավարման օղակների (նախարարություններ, ԾԻԳ-եր) միջոցով ՔՀԿ-ներին հասցեագրված միջոցների տրամադրման կապակցությամբ:

**11.7.** ՀՀ պետական բյուջեից ՀԿ-ներն աջակցություն ստանում են «Նվիրատվություններ ոչ կառավարական (հասարակական) կազմակերպություններին», «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին», «Այլ ծախսեր» և «Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր» հոդվածներով (տնտեսագիտական դասակարգում): Փորձագիտական որոշ գնահատականներով վերջին տարիներին ՀՀ պետական բյուջեից հասարակական կազմակերպություններին տրամադրված գումարի ընդհանուր չափը կազմել է տարեկան մոտ տասը միլիոն ԱՄՆ դոլար<sup>4</sup>:

**11.8.** Ոչ կառավարական կազմակերպություններին հատկացվող նվիրատվությունների ամենախոշոր շահառուն ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարությունն է (42,9%), որը միջոցների զգալի մասը տրամադրում է մարզական ֆեդերացիաներին, որոնք գրանցված են որպես հասարակական կազմակերպություններ: Վերոհիշյալ

<sup>3</sup> *Տե՛ս* Քաղաքացիական հասարակության կառույցների պետական ֆինանսավորման մեխանիզմները ՀՀ-ում: PFCS, USAID, CDPF, Երևան, 2012, էջ 5; 10:

<sup>4</sup> «ՀԿ-ների գործունեության իրավական դաշտի ներկայիս վիճակը Հայաստանում»: Զեկույց՝ մշակված Լ.Պանովի կողմից: «Շահույթ չհետապնդող իրավունքի բուլղարական կենտրոն», 2011: («Քառույթերփարթ ինտերնեյշնլ», ԱՄՆ ՄԶԳ):

հողվածներից ֆինանսավորում է հատկացվում նաև պետության կողմից հիմնադրված և/կամ կառավարվող տարբեր հիմնադրամների<sup>5</sup>: Սակայն թե՛ մարզական ֆեդերացիաները, թե՛ պետության կողմից հիմնադրված և/կամ կառավարվող հիմնադրամները դժվար է ԲՀԿ-ներ համարելը, քանզի դրանցում գերակայող է պետության մասնակցությունը: Ի դեպ, նշված կազմակերպությունները պետական բյուջեից միջոցներ են ստանում նաև «ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին» տողով: Այսինքն, կառավարությունն ինքը մի դեպքում այս կառույցները համարում է ԲՀԿ-ներ և հասարակական կազմակերպություններ, մեկ այլ դեպքում՝ պետական հատվածի մաս:

**11.9.** Առաջիկա տարիներին օրենսդրական բարեփոխումների համատեքստում անհրաժեշտ է հստակեցնել ՀՀ պետական բյուջեից ԲՀԿ-ներին տրվող ֆինանսական աջակցության ռազմավարությունն ու ընթացակարգերը՝ տարբերակելով վերջիններս շահույթ հետապնդող կազմակերպությունների համար սահմանված ընթացակարգերից և մատչելի դարձնելով դրանք ոչ կառավարական կազմակերպությունների համար: Ցանկալի է, որպեսզի պետական բյուջեից ԲՀԿ-ներին միջոցների հատկացումը իրականացվի առանձին տողով, որպեսզի ապահովվի դրանց հասցեականությունը և վերահսկման արդյունավետությունը: Պետական բյուջեում ԲՀԿ-ներին հատկացումների չափը պետք է որոշվի՝ ելնելով իրականացվող քաղաքականության առաջնահերթություններից: Ընդ որում, ԲՀԿ-ներին կատարվելիք հատկացումների տողի ձևավորումը պետք է կապակցված լինի յուրաքանչյուր հաջորդ տարվա բյուջեի ծրագրավորման գործընթացի հետ:

**11.10. Պետական դրամաշնորհների մասին առցանց տվյալների շտեմարան.** ԲՀԿ-ներին հատկացվող պետական ֆինանսավորման գործընթացի վերահսկման լավ միջոց կարող է լինել առցանց տվյալների բանկը, որտեղ կլինեն տեղեկություններ տրամադրված դրամաշնորհների, տվյալ ծրագիրն իրականացրած կազմակերպությունների մասին, կպարունակվեն հղումներ այն կայքին, որտեղ տեղադրված են դրանց տարեկան հաշվետվությունները: Կտեղադրվեն նաև հայտարարություններ իրականացվելիք դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ: Դա թույլ կտա ԲՀԿ-ներին որոնումներ կատարել ոչ թե առանձին նախարարությունների ու գերատեսչությունների կայքերում, այլ անհրաժեշտ տեղեկատվությունը գտնել մեկ տեղում:

**11.11. Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների՝ որպես առանձին կազմակերպական-իրավական ձևի նախատեսում և օրենսդրական կարգավորում:** Որպես հիմնադրամների առանձնահատուկ տարատեսակ, առաջարկվում է սահմանել անձեռնմխելի կապիտալով հիմնադրամը (ԱԿՀ): ԱԿՀ-ն հիմնադրամի կարգավիճակ

<sup>5</sup> Օրինակ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2011թ. ֆինանսական աջակցության ծրագրերի շրջանակներում որպես ԲՀԿ-ներ են ներկայացվել Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամը, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը, Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոնի հիմնադրամը, Հայաստանի երիտասարդական հիմնադրամը:



ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի՝ որպես առանձին ինստիտուտի, առանձնահատկությունները կսահմանվեն օրենքով:

**11.12.** ԱԿՀ-ի որպես նվիրատվություն ստացած գումարի ազատ տնօրինման իրավունքը կսահմանափակվի օրենքով. ԱԿՀ-ները պարտավորված կլինեն տվյալ միջոցները ներդնել, և միայն ներդրումից ստացված շահույթը կարող են տնօրինել համաձայն իրենց կանոնադրությանը և նպատակներին: ԱԿՀ-ների մասին հայեցակարգային դրույթները տրված են 12-րդ կետում:

**11.13.** ԱԿՀ-ները միջազգային պրակտիկայում համարվում են քաղաքացիական հասարակության, ինչպես նաև մշակութային և կրթական հաստատությունների ֆինանսական կայունությունն ապահովող առավել գործուն միջոցներից մեկը: Նշված ինստիտուտի ներդնումը կնպաստի մշակութային և կրթական կազմակերպությունների գործունեության կայունության և արդյունավետության բարձրացմանը, քանի որ հաճախ նման կազմակերպությունների գործունեությանը խոչնդոտում է ֆինանսական միջոցների սղությունը կամ դրամական հոսքերի անկայունությունը: ԱԿՀ-ները կարող են կիրառվել առողջապահական, կրթական, համայնքային զարգացման և այլ երկարաժամկետ ծրագրեր իրականացնելու նպատակով:

**11.14.** **Ուղղակիորեն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի և անձեռնմխելի կապիտալի հիմնադրամների իրավական կարգավորման դեպքում ՔՀԿ-ներին հասանելի կլինեն իրենց ֆինանսական ինքնուրույնությունն ու կայունությունը ապահովող գործիքներ, ինչն էլ կերաշխավորի վերջինների գործունեության կանխատեսելիությունը, հնարավորություն կտա իրականացնել երկարաժամկետ պլանավորում և կյանքի կոչել խոշոր ծրագրեր:**

**12. Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի իրավական կարգավորումը.**

**12.1.** Օրենքով ԱԿՀ-ի նախատեսումը հնարավորություն կտա ունենալ հավելյալ գործիք՝ ուղղված ՔՀԿ-ների ֆինանսական կայունության ապահովմանը: Միևնույն ժամանակ հստակ օրենսդրական կարգավորումը կնվազեցնի հարկերից խուսափելու, փողերի վաճառման և այլ չարաշահումների ռիսկերը, կապահովի գործունեության թափանցիկությունը և կխթանի մասնավոր անձանց կողմից ֆինանսական միջոցների տրամադրումը:

**12.2.** ԱԿՀ-ների արդյունավետության համար անհրաժեշտ է նախատեսել հետևյալ սկզբունքները և ինստիտուտները՝

Ա. Նպատակային դրամագլխի անձեռնմխելիություն և փողերի վաճառում. արգելվում է անմիջապես օգտագործել ԱԿՀ-ի ստեղծման և համալրման նպատակով նվիրաբերված դրամական միջոցները՝ բացառությամբ դրանց ներդրումից: ԱԿՀ-ի ինստիտուտի ներդրման սկզբնական փուլում մայր գումարը կարող է ներդրվել միայն պետական պարտատոմսերում՝ լինելով պետության ուշադրության կենտրոնում:

Բ. Թափանցիկություն. դրամագլխի հետ կապված բոլոր գրառումներն ու գործարքները հասանելի և բաց են դնորների, աշխատողների և հասարակության

բոլոր շահագրգիռ անդամների համար: ԱԿՀ-ն անցնում է տարեկան պարտադիր աուդիտ: Նվիրատուներն իրավունք ունեն ԱԿՀ-ից պաշտոնական տեղեկատվություն ստանալ դրա ձևավորման, կառավարումից ստացված եկամտի կամ վնասի չափի, կառավարումից ստացված եկամտի օգտագործման ուղղությունների վերաբերյալ:

Գ. Հրապարակայնություն. հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱԿՀ-ն իրավունք ունի հայտարարել դրամական միջոցների հրապարակային հավաքագրում, ինչպես նաև, որ նպատակային դրամագլխի հավաքագրումը ենթադրում է հասարակության լայն շերտերի ներգրավում կազմակերպության առաքելության իրականացման գործում անհրաժեշտ է, որ ԱԿՀ-ի վերաբերյալ տեղեկությունները հասանելի լինեն հետաքրքրված յուրաքանչյուր անձի համար: Յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո ԱԿՀ-ն պետք է սահմանված հաշվետվությունը տեղադրի իր կայքում (առկայության դեպքում) և [www.azdarar.am](http://www.azdarar.am) պաշտոնական հրապարակումների կայքում՝ կցելով նաև աուդիտի եզրակացությունը:

Դ. Ստեղծման նպատակների հստակություն և գործունեության ուղղությունների կայունություն. ԱԿՀ-ի կանոնադրությունը պետք է պարունակի տեղեկություններ իր նպատակների մասին: ԱԿՀ-ի շահառուները և գործունեության նպատակները կարող են փոփոխվել միայն դատարանի որոշմամբ, և միայն օրենքով սահմանված դեպքերում:

**12.3.** ԱԿՀ-ի գործունեության արդյունավետության ապահովման համար, անհրաժեշտ է կիրառել ճկուն ֆինակալ գործիքներ:

Ա. Անձեռնմխելի կապիտալի համալրմանն ուղղված գումարները, անկախ գումարի չափից, պետք է նվազեցվեն համապատասխան հարկատեսակների հարկման բազաներից (եկամտային հարկի, շահութահարկի և այլն):

Բ. Անձեռնմխելի կապիտալի ներդրումից ստացված եկամուտները, երբ դրանք ուղղվում են ՔՀԿ-ների համապատասխան ծրագրեր իրականացնելու համար չպետք է ավելացվեն շահութահարկի հարկային բազային:

Գ. Անձեռնմխելի կապիտալից ստացված եկամուտներով իրականացվող գործարքները պետք է ազատվեն ԱԱՀ-ով հարկումից:

### **13. Կամավորության ինստիտուտի հստակ օրենսդրական սահմանում.**

**13.1.** Կամավորականությունը բոլոր երկրներում միշտ եղել և մնում է քաղաքացիական ակտիվության հիմնական տարրերից մեկը: Միննույն ժամանակ կամավորականությունը, կամավորների կատարած աշխատանքը ամեն դեպքում պետք է որևէ կերպ արձանագրվի, առավել ևս, երբ խոսքը վերաբերում է ՔՀԿ-ների կողմից իրականացվող ծավալուն և հասարակական հնչեղության ծրագրերին: Կամավորները գործունեության համար չեն ակնկալում դրամական փոխհատուցում: Այդուհանդերձ, իրականացված ծախսերի (օրինակ տրանսպորտային ծախսեր և այլն) փոխհատուցումը, պատվոգրերի, շնորհակալական նամակների, երաշխավորագրերի տրամադրումը կարող է խթանել կամավորականության զարգացմանը:

13.2. Անհրաժեշտ է մշակել այնպիսի մեխանիզմ, որը մի կողմից կապահովի, որպեսզի ՔՀԿ-ների աշխատանքներում ընդգրկված կամավորները չհամարվեն անօրինական աշխատողներ, մյուս կողմից կբացառի իրավունքի չարաշահումը:

13.3. Այս նպատակով առաջարկվում է սահմանել կամավորական աշխատանքի մասին հայտարարագրելու կարգը և ժամկետները, կամավորներին<sup>6</sup> գործուղման ուղարկելու, ծախսերի փոխհատուցման, ինչպես նաև տարվա ավարտին այդ մասին ամփոփ հաշվետվություն ներկայացնելու և տեղեկությունները հրապարակելու կարգը: Համապատասխան իրավական ակտով<sup>7</sup> կարող է կանոնակարգվել նաև այլ հարցեր. մասնավորապես, ինչ ծավալով, ինչ կարգով և որ դեպքերում կամավորները կարող են փոխհատուցում ստանալ ճամփորդական կամ այլ ծախսերի համար, ստանալ օրապահիկ և այլն: Նշված հարցերը կարևոր են ինչպես կամավորականության խթանման, այնպես էլ ՔՀԿ-ի հաշվապահական հաշվառման և հարկերը ճիշտ հաշվարկելու տեսանկյունից:

**13.4. Առաջարկվող լուծումները կապահովեն կամավորականության զարգացումը Հայաստանի Հանրապետությունում, միևնույն ժամանակ կբացառեն գործատուների կողմից աշխատանքային հարաբերությունների չարաշահման, չգրանցված աշխատողներ պահելու և աշխատողների իրավունքների ոտնահարման, հարկերի վճարումից խուսափելու հնարավորությունը:**

**14. Հասարակական կազմակերպությունների հաշվետվողականությունը և հանրային վերահսկողությունը.**

14.1. Ի տարբերություն առևտրային կազմակերպությունների ՔՀԿ-ների գործունեությունը հաճախ ունենում է մեծ հասարական նշանակություն և առավել կարևոր է հանրության համար: ՔՀԿ-ները հանրային կառավարման և ինքնակառավարման մաս են կազմում, ակտիվ և էական դերակատարում ունեն մի շարք ոլորտներում (կրթություն, սոցիալական ապահովում, առողջապահություն և այլն): Նշված կազմակերպությունների գործունեությունը ունի մեծ նշանակություն հասարակության լայն շրջանակների (ոչ միայն անդամների) համար, ուստի պետք է հնարավորություն ստեղծվի, որպեսզի հասարակությունը տեղեկացված լինի ՔՀԿ-ների գործունեության, ներգրավված միջոցների, դրանց աղբյուրների և գործունեության ընդհանուր արդյունքների վերաբերյալ:

14.2. Անհրաժեշտ է մշակել **հաշվետվողականության այնպիսի համակարգ**, որն անհամաչափ բեռ չի ստեղծի ՔՀԿ-ների համար և օգտակար և անհրաժեշտ

<sup>6</sup> Սույն հայեցակարգի շրջանակներում կամավորներ հանդիսանում են այն ֆիզիկական անձինք, ովքեր չեն հանդիսանում տվյալ հասարակական կազմակերպության անդամ (վերջինների աշխատանքը a priori համարվում է կամավորական, եթե այլ բան չի ապացուցվում), այլ մասնակցում են տվյալ կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերին հասարակական հիմունքներով՝ սահմանված կարգի համաձայն:

<sup>7</sup> Կամավորության ինստիտուտը առաջարկվում է կարգավորել օրենքով: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է փոփոխություն կատարել ՀՀ աշխատանքային օրենսգրքում՝ այն առանձին օրենսդրական լուծումներին համապատասխանեցնելու նպատակով

տեղեկություններ կտրամադրի հանրությանը և պետությանը: Այս տեղեկությունները պետք է արագ և մատչելի լինեն հանրության բոլոր անդամների համար, քանի որ ՔՀԿ-ների հաշվետվողականության նպատակները ներառում են նաև վերջինների գործունեության նկատմամբ հանրային վերահսկողության իրականացումը և անհատ դոնորների ու շահառուների իրավունքների պաշտպանությունը:

**14.3.** ՔՀԿ-ների՝ հրապարակման ենթակա հաշվետվությունները պետք է պարունակեն տեղեկություններ վերջինների անդամների քանակի, ֆինանսական միջոցների, ֆինանսավորման աղբյուրների, իրականացված ծրագրերի, շահառուների և դրանց խմբերի, պետական աջակցություն ստանալու կամ պետական ծրագրեր իրականացնելու և օրենքով սահմանված այլ հարցերի վերաբերյալ:

**14.4.** Օրենքում պետք է հստակորեն սահմանվեն այն տեղեկությունները, որոնք պետք է հրապարակեն առանձին տեսակի կազմակերպությունները: Մասնավորապես այն կազմակերպությունները, որոնք ծրագրեր են իրականացրել պետական (հանրային) ֆինանսական միջոցների հաշվին, ինչպես նաև ԱՄՀ-ները հանրությանը ներկայացնում են առավել մանրամասն ֆինանսական և տարեկան ծրագրային հաշվետվություններ: Միևնույն ժամանակ, ինչպես նշված է վերը, այդ կազմակերպությունների համար տարեկան աուդիտը կլինի պարտադիր:

**14.5.** Պետք է հստակորեն սահմանել ՔՀԿ-ների հաշվետվությունների ձևերը և բովանդակությանն առաջադրվող պահանջները, ինչպես նաև ներկայացման կարգն ու ժամկետները: Այսպես, սահմանված հաշվետվությունները պետք է հրապարակվեն [www.azdarar.am](http://www.azdarar.am) պաշտոնական կայքի միջոցով՝ նպատակ ունենալով ապահովել ՔՀԿ-ների գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը, ինչպես նաև բոլոր հաշվետվությունների հասանելիությունը մեկ աղբյուրից: Միևնույն ժամանակ օրենքով պետք է սահմանվեն հաշվետվություն հրապարակելու առավել բարենպաստ պայմանները:

**14.6.** Տարեկան հաշվետվությունները չհրապարակելը կհանգեցնի նախազգուշացման, իսկ նույն խախտումը երկու կամ ավելի անգամ կատարելու համար կնախատեսվի այլ պատասխանատվության միջոցներ (տուգանք): Որոշ դեպքերում և կազմակերպությունների որոշ տեսակների դեպքում բազմակի անգամ հաշվետվություն չհրապարակելը կարող է դիտվել որպես օրենքի պահանջների էական խախտում, ինչը կհանգեցնի ՔՀԿ հարկադիր լուծարման՝ դատարանի համապատասխան վճռի հիման վրա:

**14.7.** Առաջարկվող լուծումները առավել թափանցիկ կդարձնեն ՔՀԿ-ների գործունեությունը, կապահովեն հասարակության անդամների տեղեկացվածությունը առկա կազմակերպությունների, իրականացվող ծրագրերի, պետության կողմից տրամադրվող աջակցության մասին: Պետությունը հնարավորություն կունենա համապարփակ տեղեկություններ ստանալ ՔՀԿ-ների իրականացվող ծրագրերի և շահառուների մասին: Արդյունքում հնարավոր կլինի ապահովել պետական աջակցության բարձր արդյունավետությունը, առկա

**ռեսուրսները առավել կենտրոնացնելով հասարակական աջակցությունից դուրս մնացած և առավել կարիքավոր ոլորտներում:**

**III. Օգտագործված հրապարակումների, ուսումնասիրությունների և միջազգային կազմակերպությունների հանձնարարականների ցանկ**

15. Սույն հայեցակարգը մշակվել է հայաստանյան և միջազգային կազմակերպությունների և փորձագետների կողմից իրականացված մի շարք հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա: Հայեցակարգը մշակելիս նաև հաշվի են առնվել միջազգային կազմակերպությունների մի շարք հանձնարարականներ (recommendations): Ստորև ներկայացնում ենք սույն հայեցակարգի համար հիմք ծառայած փաստաթղթերի ամբողջական ցանկը՝

- Հանրային խորհրդի «ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգի» նախագիծ
- Քաղաքացիական հասարակության ցանցի «Հասարակական կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգի» նախագիծ:
- Զեկույց՝ մշակված Լյուբեն Պանովի կողմից «Շահույթ չհետապնդող իրավունքի բուլղարական կենտրոն» (BCNL/ՇՀԻԲԿ)
- The International Journal of Not-for-Profit Law; Volume 9, Issue 3; July 2007
- Comparative Overview of European Standards and Practices in Regulating Public Participation; Katerina Hadzi-Miceva-Evans, European Center for Not-for-Profit Law
- European Union Advisory Group to the Republic of Armenia; Strengthening Civil Society and its Interaction with State Institutions; Policy Paper - DRAFT FOR COMMENTS
- EUROPEAN PRACTICES ON IMPLEMENTATION OF POLICY DOCUMENTS AND LIAISON OFFICES THAT SUPPORT CIVIL SOCIETY DEVELOPMENT; Katerina Hadzi-Miceva-Evans (Senior Legal Advisor, ECNL) with research support provided by Hanna Asipovich (Project Coordinator, ECNL), Andrea Judit Toth (Program Manager, ECNL) and Fabrice Suplisson, ICNL consultant
- Guidelines for Laws Affecting Civic Organizations; Second Edition, Revised and Enlarged OPEN SOCIETY INSTITUTE
- ՀԿ-ների գործունեության իրավական դաշտի ներկայիս վիճակը Հայաստանում
- THE ROLE OF LEGAL REFORM IN SUPPORTING CIVIL SOCIETY: AN INTRODUCTORY PRIMER International Center for Not-For-Profit Law and United Nations Development Programme; August 2009
- Правовые основы деятельности некоммерческих организаций в Центральной и Восточной Европе; Дуглас Патцен, Дэвид Мур, Майкл Дарем
- CIVICUS CSI National Implementation Team papers:

- (1) Armenian civil society: from transition to consolidation. Analytical Country Report; Yerevan 2010
- (2) Armenian Civil Society: from Transition to Consolidation. Policy Action Brief; Yerevan 2010

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**  
**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ԶԱՐԳԱՅՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ**  
**ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

h/h	Միջոցառման անվանումը	Միջոցառման կատարման ժամկետը	Պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը	Միջոցառման ֆինանսական ապահովման աղբյուրը
1.	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հիմնադրամների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնել:	2014 թվականի ապրիլի 3-րդ տասնօրյակ	ՀՀ արդարադատության նախարարություն	ընթացիկ հաշիվներ
2.	«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հիմնադրամների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և	2014 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ արդարադատության նախարարություն	ընթացիկ հաշիվներ

	<p>«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» (ըստ անհրաժեշտության) ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնել:</p>			
3.	<p>«Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնել:</p>	<p>2014 թվականի հունիսի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>ընթացիկ հաշիվներ</p>
4.	<p>Կամավորության ինստիտուտի իրավական կարգավորման մոդելի վերաբերյալ և տեխնիկական լուծումների նախնական տեխնիկական առաջադրանքի մոդելի մշակման տեղեկանք</p>	<p>2014 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>ընթացիկ հաշիվներ</p>
5.	<p>«Հասարակական</p>	<p>2014 թվականի</p>		<p>ընթացիկ</p>



<p>կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հիմնադրամների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», և «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնել:</p>	<p>հունիսի 3-րդ տասնօրյակ</p>		<p>հաշիվներ</p>
---	-------------------------------	--	-----------------

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ և ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

### **Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

«Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է ՔՀԿ-ների առկա օրենսդրական խնդիրները լուծելու և տվյալ ոլորտը հետագա զարգացնելու անհրաժեշտությամբ:

### **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

2009 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ Կառավարությունը հաստատեց «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը: Նշված նախագծում ներառված առաջարկները մտահոգեցին քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, ուստի ստեղծվեց Քաղաքացիական հասարակության կառույցների նախաձեռնող խումբ: Համախմբված ավելի քան 300 հասարակական կազմակերպությունների նպատակն էր՝ մասնակցել դաշտը կարգավորող օրենսդրության մշակման աշխատանքներին և ներկայացնել առաջարկություններ:

Օրենքի այս նախագծի մշակումից հետո տարբեր կառույցներ կազմակերպվեցին հանրային քննարկումներ, որոնց նպատակն էր բարձրաձայնել դաշտում առկա խնդիրները և առաջարկել առավել համապարփակ և ընդունելի լուծումներ: Ապա, ներկայացված առաջարկներն ու տեսակետներն ամփոփվեցին և դարձան սույն հայեցակարգի մշակման համար:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների առկա դասակարգումը, և առաջին հերթին դրա արդյունքում առաջ եկող սահմանափակումները, մի շարք խնդիրներ են առաջացնում: Փաստորեն օրենսդրական կարգավորման արդյունքում անհնար է լինում որոշ չափանիշներով ՔՀԿ-ի հիմնադրումը: Օրինակ, օրենսդրությունը չի նախատեսում սահմանափակ մասնակցությամբ ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման հնարավորություն, իսկ վերջինները ոչ առևտրային գիտական, գիտահետազոտական կենտրոնների (think tank) գործունեության համար ամենահարմար կազմակերպչական-իրավական տարբերակն են: Միևնույն ժամանակ, առկա օրենսդրական կարգավորումները բավականին խիստ են, իմպերատիվ նորմերը գերակշռում են, ինչը հնարավորություն չի տալիս առավել ճկուն մշակել անհրաժեշտ կանոնադրական կարգավորումները: Ավելին, ոչ առևտրային կազմակերպությունների առկա

դասակարգման մեջ բացակայում են այնպիսի կազմակերպական իրավական ձևեր, որոնցում միաժամանակ հնարավոր կլինի միավորվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության ժամանակ առկա խնդիրներով պայմանավորված և միջազգային փորձի ուսումնասիրման արդյունքում ներկայացվող բարեփոխումների շրջանակներում առաջարկվում է ՀՀ գործող օրենսդրության վերանայում, որի արդյունքում օրենսդրությունը կհամապատասխանեցվի քաղաքացիական հասարակության ներկա պահանջներին և խնդիրներին, և կխթանի քաղաքացիական հասարակության հետագա զարգացումը: Մասնավորապես, առաջարկվում է փոփոխություն կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գլուխ 5-ում (Իրավաբանական անձինք)՝ վերանայելով ոչ առևտրային կազմակերպությունների տեսակները, ինչպես նաև ընդունել համապատասխան հատուկ օրենսդրություն՝ առանձին կազմակերպական-իրավական տեսակների մասով:

### **Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը**

Հայեցակարգի ընդունման նպատակն է ապահովել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայուն զարգացումը՝ գործող օրենսդրությունը ներկա պահանջներին համախառնապես համապատասխանեցնելու միջոցով:

Այսպիսով, ակնկալվում է առավել թափանցիկ դարձնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությունը, ապահովել հասարակության անդամների տեղեկացվածությունը առկա կազմակերպությունների գործունեության, իրականացվող ծրագրերի, պետության կողմից տրամադրվող աջակցության մասին:

Պետությունը հնարավորություն կունենա համապարփակ տեղեկություններ ստանալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի և կկարողանա առավել արդյունավետ օգտագործել տեղային միջամտությունների գործիքը, առկա ռեսուրսները առավել կենտրոնացնելով հասարակական աջակցությունից դուրս մնացած և առավել կարիքավոր ոլորտներում կամ բնակավայրերում: Արդյունքում, կապահովվի թափանցիկությունը և տարբեր ոլորտներում քաղաքականության մշակման արդյունավետությունը:

## **ՏԵՂԵԿԱՆՔ N 1**

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ և ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

## **ՏԵՂԵԿԱՆՔ N 2**

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ և ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: